ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՂՔԸ
THE SIN OF TOLERANCE

- Եփեսոսը՝ մեծ քաղաքական կենտրոն էր
- Զմյուռնիան առևտրի մեծ կետնրոն էր
- Պերգամոնը՝ մեծ կրոնական կենտրոն
- Թիվատիրը՝ հայտնի է եղել իր Մանրագործվածքներով, հատկապես մանուշակագույն ներկերի եւ նրա առեւտրի արտադրությամբ: (մանուշակագույն ծածկոցը խորհրդանշում էր կառավարող իշխանությունը)

Ստամբուլից Իզմիր գնացող ճանապարհը անցնում է մի փոքրիկ և անշուք քաղաքի՝ Ակշիսարի (բնակչությունը՝ 30,000), միջով, որը հիմա զբաղեցնում է այն տարածքը, որտեղ մի ժամանակ կանգնած էր կարևոր ռազմական քաղաք Թիվատիրը: Նոր Կտակարանի ժամանակներում, այդ քաղաքը գտնվում էր Պերգամոն, Սարդիս և Զմյուռնիա տանող երեք գլխավոր ճանապարհների խաչմերուկում:

> Մեկ գրամ մանուշակագույն ներկը գնահատվում էր ավելի քան տաս գրամ ոսկի եւ մեկ մանուշակագույով ներկված բուրդը կարող էր վաճառվել 1000 (denarii) գումար որը կազմում էր բանվորի երեք տարվա աշխատավարձը: Նման նյութով պատրաստված մի ամբողջ թիկնոց կարող է արժենալ երեք անգամ ավել:
>
> > Գործ. 16:13-15 - 13 Եւ շաբաթ օրը քաղաքից դուրս գնացինք դէպի գետը, ուր որ սովոր էին աղօթք անելու. Եւ նստած խօսում էինք ժողովուած կանանց հետ: 14 Եւ մի կին՝ անունը Լիդիա՝ ծիրանավաճառ (seller of purple), Թիվատիր քաղաքից, աստուածավախ, լսեց. որի սիրտը Տէրը բացեց, որ Պօղոսի խօսածները մտիկ անէ: 15 Եւ երբոր նա եւ իր տունը մկրտուեց, աղաչեց ասելով. Եթէ ինձ Տիրոջ հավատացած համարէք, մտէք իմ տունը՝ մնացէք. եւ բռնադատեց տարաւ մեզ:

Բանալի հատվածներ. Հայտ. 2:18-29

*18 Եվ Թիվատիրում գտնվող եկեղեցու հրեշտակին գրի՛ր. «Այսպես է ասում **Աստծո Որդին**, որ կրակի բոցի պես աչքեր ունի, և Նրա ոտքերն ազնիվ պղնձի նման են»:*

- ***Թիվատիր – նախկինում կոչվում էր «Հունարեն – դստեր, կին»***

  Եփեսացիներին 6:17-18 — Առե՛ք նաև փրկության սաղավարտը և Հոգու սուրը, որ Աստծու խոսքն է: Ամեն ժամ աղոթե՛ք և խնդրե՛ք Հոգով.

- ***Գովասանք — Հայտ. 2:19***

  *19 Գիտեմ քո գործերը և **սերդ** ու ծառայությունդ և քո հավատն ու համբերությունը, և որ քո վերջին գործերն առաջիններից շատ են:*

- ***Անհանգստություն – Հայտ. 2:20-22***

  *20 Բայց քո դեմ որոշ բաներ ունեմ, որովհետև դու **թույլ ես տալիս (հանդուրժող)** այդ **Հեզաբել կնոջը**, որ ինքն իրեն մարգարեուհի է անվանում, Իմ ծառաներին ուսուցանել ու մոլորեցնել, որ պոռնկություն անեն ու կուռքերին զոհ արված բաներ ուտեն: 21 Եվ Ես նրան ժամանակ տվեցի, որ նա ապաշխարի իր պոռնկության համար, բայց չապաշխարեց: 22 Եվ Ես նրան անկողին եմ գցելու և նրա հետ շնացողներին՝ **մեծ նեղության մեջ**, եթե իրենց կատարածների համար չապաշխարեն: 23 Եվ նրա զավակներին պիտի մահով սպանեմ, ու բոլոր եկեղեցիները պիտի իմանան, թե **Ես Նա եմ,** որ նրանց **երիկամներն ու սրտերն եմ քննում** և ձեզնից յուրաքանչյուրին հատուցելու եմ ձեր գործերի համեմատ:*

  Նաբովթի այգին. Գ Թագ. 21

  - ***Աքաբ թագավորը ցանկանում էր Նաբովթի այգին: (Մանվելի պատմությունը)***
  - ***Հեզաբել թագուհին ինկվիզիցիա է կազմակերպում (սուտ վկաներ, մեղադրանք և մահապատիժ):***
  - ***Թագավորը զավթում է Նաբովթի այգին:***
  - ***Նաբովթի ժառանգները նույնպես սպանվում են:***

- ***Քաջալերանք— Հայտ. 2:24-25***

  *24 Ասում եմ ձեզ, ինչպես նաև մյուսներին, որ Թիվատիրում են գտնվում, **ովքեր** որ չունեն այս վարդապետությունը, և **ովքեր** չճանաչեցին սատանայի խորությունները (ինչպես ասում են), ձեր վրա ուրիշ ծանրություն չպիտի դնեմ: 25 Սակայն, պահեցե՛ք այն, որ արդեն ունեք, **մինչև Ես գամ:***

- ***Խոստում հաղթողներին***

  *26 Եվ նա, ով հաղթի և Իմ գործերը պահի մինչև վերջ, նրան **իշխանություն** եմ տալու ազգերի վրա. 27 Եվ նա պիտի հովվի նրանց **երկաթե գավազանով**, նրանք փշրվելու են բրուտի ամանների պես. այնպես, ինչպես Ես Իմ Հորից ստացա: 28 Եվ Ես նրան պիտի տամ **առավոտյան աստղը**: 29 Նա, ով ականջ ունի, թող լսի, թե Հոգին ինչ է ասում եկեղեցիներին:*

Ո՞վ է «Հաղթողը»:

«Քանի որ ամէն ոք, որ Աստծուց է ծնուած, հաղթում է աշխարհին: Եւ ա՛յս է այն յաղթութիւնը, որ յաղթում է աշխարհին՝ մեր հաւատը: Եւ ո՞վ է, որ յաղթում է աշխարհին, եթէ ոչ նա, ով հաւատում է, որ Յիսուսն է Աստծու Որդին:»: Ա Հովհ. 5:4,5:

I. ԱՐԴՅՈ՞Ք ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՀՈՐԴՈՐՈՒՄ Է ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԵ ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:
DOES THE BIBLE PROMOTE TOLERANCE OR INTOLERANCE?

*20 Բայց քո դեմ որոշ բաներ ունեմ, որովհետև դու **թույլ ես տալիս (հանդուրժող)** այդ **Հեզաբել կնոջը**, որ ինքն իրեն մարգարեուհի է անվանում, Իմ ծառաներին ուսուցանել ու մոլորեցնել,*

Աստվածաշնչյան "հանդուրժողականություն" բառը "համբերություն" բառն է: Աստվածաշնչում համբերությունը ոչ միայն "լռակյաց սպասելն" է, այլ "տառապանքին համբերել՝ առանց վրեժխնդրության":

ԻՆՉԸ ՉԻ ՀԱՄԱՐՎՈՒՄ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. *Ճշմարտությունը հարմարեցնել այնպես, որպեսզի Ձեր հայացքները/տեսակետը ավելի հաճելի լինեն ուրիշներին:*

ԻՆՉ Է ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. *Սիրել ուրիշներին նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք չեն փոխում իրենց տեսակետը Ձեզ դուր գալու համար:*

*24 Ասում եմ ձեզ, ինչպես նաև մյուսներին, որ Թիվատիրում են գտնվում, **ովքեր** որ չունեն այս վարդապետությունը, և **ովքեր** չճանաչեցին սատանայի խորությունները*

II. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ ԱՍՈՒՄ Է, ՈՐ ՀԱՆԴՈՒՐԺՈՂ /ՀԱՄԲԵՐԱՏԱՐ ԵՂԵՔ ՄԻՄՅԱՆՑ ՀԱՆԴԵՊ:
THE BIBLE SAYS BE TOLERANT WITH ONE ANOTHER.

*19 Գիտեմ քո գործերը և **սերդ** ու **ծառայությունդ** և քո **հավատն** ու **համբերությունը**, և որ քո վերջին գործերն առաջիններից շատ են:*

Եփ. 4:1-2 - *1 Արդ աղաչում եմ ձեզ ես՝ Տիրոջ համար կապուածս, որ այնպէս գնաք ինչպէս որ կվայելէ այն կոչումին որի մէջ կանչուեցաք: 2 Ամեն խոնարհութիւնով եւ հեզութիւնով եւ երկայնմտութիւնով, սիրով իրար համբերելով:*

Կող. 3:13 - *13 Իրար համբերելով, եւ իրար ներելով, եթէ մէկը միւսի դէմ տրտունջ ունենայ, ինչպէս Քրիստոսն էլ ձեզ ներեց, այնպէս էլ դուք.*